

# The Baptist Tabernacle of Los Angeles

1329 South Hope Street, L.A. Civic Center

Mailing Address:  
P. O. Box 15308  
Los Angeles, CA 90015  
Phone: (213) 744-9999

E-mail: [rlhymersjr@sbcglobal.net](mailto:rlhymersjr@sbcglobal.net)  
[www.sermonsfortheworld.com](http://www.sermonsfortheworld.com)  
[www.baptisttabernacle.com](http://www.baptisttabernacle.com)



Dr. R. L. Hymers, Jr.  
Senior Pastor

Dr. Christopher L. Cagan  
Associate Pastor

Dr. Kreighton L. Chan  
Assistant Pastor

Դեկտեմբեր, 2016

## Սիրելի Ընկեր:

Մեր եկեղեցու իսկական իրադարձութիւնը այս տարւան մեջ, վերանորոգութիւնն էր որ Աստուած հնաձեւ կերպով ուղարկեց մեզ: Ընտանիքիս հետ հանգստանալու էինք գնացել Քանքուն, Մեքսիկո: Այդ օրերից մեկում, առանձին ժամանակ անցկացրի սենեակումս կարդալով մի գիրք, 1949 եւ 1953 թուակաների ժամանակամիջոցում, Լուիս Կոլիում տեղի ունեցած վերանորոգութեան մասին որը գտնվում է Սկաթլանդիայի Հիւսիսայնի ծովեզերքում: Կարդալով այդ գիրքը իմ հոգիս վերանորոգվեց: Սկսեցի զորաւոր կերպով աղոթել Աստծուն որպէսզի մեր եկեղեցում էլ վերանորոգութիւն տեղի ունենա: Երբ վերադարձանք երեք օրեր քարոզեցի եւ մի քանի երիտասարդներ հուսալից ենք որ փրկուեցին: Բայց մեծ վերանորոգութիւնը հանկարծակի այս ամառւան տեղի ունեցաւ: Հինգշաբթի երեկոյան Օգոստոս 27-ն էր: Մեր երիտասարդներից ինդրել էի Եսայիա 64:1-3 համարները անգիր անէին, “Ո՞հ թէ ճեղքէիր երկինքը՝ վայր իջնէրի ...” (Եսայիա 64:1): Նրանցից երեքը այս համարը արտասանեցին: Հանկարծ մի երիտասարդ մարդ ոտքի վրա ցատկեց եւ սկսեց բռռալ, “Ես կորած եմ!” Նա ծունկի եկաւ հեկեկալով սկսեց լալ: Թվում էր թէ այս պատահածը անժամանակ էր որով այդ գիշեր ոչ մի զգացումային ծրագիր տեղ չէր ունենում, անգամ չէինք երգում: Այդ քանի ժողովներում, Հունվար եւ Օգոստոս ամիսներում, Աստուած ներքեւ իջաւ եւ 22 երիտասարդներ փրկուեցին եւ 14 հաւատացեալներ վերանորոգվեցին, Սուրբ Հոգով լցվելով: Ուրիշ քաղաքներում ականատես եմ եղել երեք զորաւոր վերանորոգութիւնների, մի անսովոր եւ զորաւոր տեսակ որ մինչեւ այսօր ոչ մի տեղ իմ գիտակցութիւնով չեմ տեսած: Բայց այս վերանորոգութիւնը առաջինն էր որ Աստուած ուղարկեց մեր եկեղեցուն, 42 տարիների ընթացքում: Մենք աղոթում էինք Աստծոյ Հոգու այցելութեան համար այդ բոլոր տարիների ընթացքում եւ Նա մեզ պատասխանեց: Բայց այդ քանի օրերում գոնէ 36 անձինք մեղքի հանդիմանութեան տակ եկան եւ 22 ուրիշներ փրկուեցին – եւ 14 հոգիներ վերանորոգվեցին եւ իրենց ուխտադրութեան վիճակից դուրս եկան: Սա տեղի ունեցաւ այն ժամանակ երբ ես շարունակ կերպով քարոզում էի Եսայիա 64:1-3 համարների մասին եւ ժողովուրդը անգամներ եւ անգամներ երգեցին մեր նիւթի երգը, “Լեցուր իմ տեսիլքս, Փրկիչ, կ’աղոթեմ, թող որ այսօր միայն Հիսուսին տեսնեմ; թէեւ դու ինձ առաջնորդում ես, Քո չ’մարող փառքը ընդգրկում է ինձ: Լեցուր իմ տեսիլքս, երկնային Փրկիչ, մինչեւ Քո փառքով իմ հոգիս փայլի: Լեցուր իմ տեսիլքս, որով բոլորին հայտնի ըլա Քո Սուրբ Պատկերի արտացոլումը իմ վրա: (“Fill All My Vision” by Avis B. Christiansen, 1895-1985): Վերանորոգութեան ժամանակ մի քանի անգամներ

չարը մոնչող առիւծի պէս եկաւ, բայց ամեն անգամ աղոթեցինք եւ նա հետ նահանջեց եւ Աստուծոյ հոգին վերադարձաւ, մարդկանց քաշելով դէպի Քրիստոս: Այդ քանի օրերում մենք կենդանի Քրիստոնէութիւնը ճաշակեցինք եւ նրանք որ ներկա էին քանի որ ապրեն չեն մոռանալու այս դէպքը: Այդ ընթացքում երկու երիտասարդներ իրենց կեանքը նւիրեցին քարոզելու: Նրանցից մէկը մեր Չինացի թարգմանիչի որդին, Նոա Սանգն է, իսկ միւսը Դկ. Քէյզընի 23-ամեա որդի Ջան Սամուէլ Քէյզընն էր որ այս վերջերս Cal State L.A. համալսարանը աւարտեց բարձրագոյն կրթութիւնով Քրեական Արդարադատութեան ճիւղում: Երկուսն էր ակնառու քարոզիչներ են: Երբ Ջանը առաջին անգամ քարոզեց, կարծես թէ քսան տարիների քարոզող լինէր, եւ Նոան կարող է իր նիւթի համար երգ ընտրի, գորաւոր քարոզի, երգը երգի եւ վերադառնա քարոզելու, Դկ. Ջան Սանգի եւ Դկ. Ջան Բ. Բայսի ոճով: Անհաւատալի! Աստուծոց շնորհակալ ենք այս երիտասարդների համար! Ջանը սկսելու է իր դասընթացները Թայլըթ Աստուածաբանական դպրոցում, Բայօլա համալսարանում Հունվար ամսից: Չնայած որ նա միայն երեքից չորս ամիս է որ սկսել է քարոզել, արդեն հրաւերներ է ստացել աւետարանչական քարոզներ տալու Հիւսիսային Հնդկաստանում, Դոմենիկան Հանրապետութիւնում եւ Հարավային Հնդկաստանում: Հաւատացած եմ որ նա բոլոր աշխարհում քարոզելու է եւ քսանմեկերորդ դարվա հայտնի քարոզիչներից մէկն է դառնալու: Եթէ կ'ցանկանաք Ջանի կամ Նոայի քարոզներից կարդալ, կարող էք դիմել մեր ցանցին [www.sermonsfortheworld.com](http://www.sermonsfortheworld.com): Սեւ էջի մեջտեղում մի կոճակ կա որը ասում է, “Քարոզի Հայերեն տարբերակը”: Սեղմեք եւ ձեր լեզվով էջը կ'տեսնեք: Այդ էջում կարող էք ընտրել եւ կարդալ Դկ. Հայմերգի, Ջան Սամուէլ Քէյզընի, Նոա Սանգի, կամ մեր ուրիշ խոսողների քարոզներից որ մեր եկեղեցում քարոզում են: Եթէ այդ կոճակը քո էջում բացակա է, ցանկը իջեցրեք եւ բազում քարոզներ կ'տեսնեք որ օգտակար եւ օրինաբեր կ'լինեն ձեզ:

Երկրորդ ամենամեծ դէպքերից որ այս տարի պատահեց մեր առաջին թոռնիկի, Հանա Քիմ Հայմերգի ծնունդն էր: Նա ծնուեց Մարտ 30-ին մեր որդուն Բաբերթ Լեւիի Հայմերգ III-ին եւ իր սիրելի կնոջ Ջինին: Հանան մի գեղեցիկ մանուկ է որ արդեն կարողանում է իր օրորոցում իրեն բարձրացնի եւ քայլի:

Ինչպէս ասացի, կնոջս Իլիանաի, իր մայրը Լինդաի, Ջինիի, Լեւիի եւ Վեւիի հետ Քանքուն գնացինք Հունվարին եւ ծովի ափում ժամանակ անցկացրինք: Չնայած ինձ լաւ չէի զգում քաղցկեղի բուժումների հետեւանքով, բայց շատ լաւ ժամանակ անցկացրինք: Իմիջայրոց, այժմ քաղցկեղը կարծես թէ հսկողութեան տակէ եւ միզուցէ բոլորովին բուժված լինեմ: Միայն ժամանակը ցույց կտա, 22 փառնոյ նիհարել եմ, որ շատ օգտակար է եղել:

Աչքի անցկացրեք “դէպքերի ցուցակը” այս տարւան անց ու դարձերի մասին: Բոզ Շէնալթ-Քուինը 97 տարեկան հասակում Փետրվար 13-ին մահացաւ: Դէվիդ Բալսթոնը, Բոլանդ Բասմոսընը եւ Դանի Թոմասը քարոզեցին եւ Ջատիկուան եւ Ապրիլ 12-ին, իմ 75 ամեակի երաժշտութիւնը կատարեցին: Տիկ. Հայմերգի եւ իր հայրիկի Բաֆաէլ Քուէլարի ծնունդն էր Ապրիլ 16-ին, նա 85 տարեկան դարձաւ, նա մեզ մոտ եկաւ եւ մի քանի օրեր մեզ հետ անցկացրեց:

Ապա մի ուրիշ մեծ բան պատահեց: Աստուած ինձ ցույց տուեց որ ժամանակն է որ մեր եկեղեցում հիմնական փոփոխութիւններ լինի: Մենք երեք երիտասարդ սարգավազ թեկնածուներ աւելացրինք մեր խումբին, Նոա Սանգ, Ջաք Գան եւ Ահարոն Եանսին: Ջան Քէյզընը իր առաջին քարոզը բերեց Հուլիս 10-ին եւ Նոա Սանգը 17-ին: Երկուսն էլ ակնառու բանախոսներ են – անհավատալի է! Հուլիս 31-ին Թիմոթի Չանը եւ Լարա Էսկոբարը ամուսնացան: Օգոստոս 21-ին Փիթըր Ստեֆան Գանը ծնուեց:

Վերանորոգութեան երկրորդ մասը սկսեց Օգոստոս 27-ին: Մենք հասկացանք որ այս իւրահաստուկ ժողովներում երբ զգուշութեամբ եւ հոգով ենք աղոթում Աստուած այնտեղ ներկա է, բայց միւս օրերում երբ առանց կենտրոնացում էինք աղոթում Աստուած լրիօերն բացակա էր եւ ոչ մի բան չէր կատարվում: Ուրեմն սա մի սովորելու փորձառութիւն դարձաւ մեզ, թէեւ անձամբ երեք մեծ վերանորոգութիւնների ականատես եմ եղել, որոնցից մեկում չորս հազար մարդիկ աւելացան Չինական եկեղեցուն երբ ես դեռ այնտեղի անդամ էի:

Դկ. Նիլ Վիվլըրը, Լուիզիանա Մկրտչական Եկեղեցու նախագահը, մեզ հետ էր Սուրբ Գրքի համագումարում, Բանուորներու Տոնի շաբաթավերջում: Նոյեմբեր 19-ին Վեսլի Հայմերզը, Քրիստին Գուէնը, Ադէլա Մէնհիվերը, Սէթուրք Չաբալգար եւ Վիրջիլ Նիքըլը մկրտուեցին: Նոյն ժողովում Ջան Սամուէլ Քէյզընը արտոնութիւն ստացաւ մեր եկեղեցում քարոզել: Հաջորդ օրը Գոհաբանութեան ճաշկերույթ ունեցանք եւ Բան Քլարքը Ջութակ նուագեց եւ Ջէօֆ Մերիլը դաշնամուր: Ինչ լաւ ժամանակ անցկացրինք! Դէյվ Շուքը վերջապէս վերադառնում է երգելու արեւմտեան ոճով հոգեւոր երգեր մեզ համար Ծննդեան տոնի առիթով Դեկտեմբեր 18-ին:

ԱՍՏՈՒԱԾ ԴՌՆԵՐ ԲԱՅԱԻ ՄԵԶ ՀԱՄԱՐ ԱԻԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԵՐ 34-ՐԴ ԼԵԶՈՒՆ, ՆԵՓԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ: Նեփալի ժողովուրդը այժմ ամեն շաբաթ կարող են իմ պատգամներս կարդան: Նեփալը աղքատ մի երկիր է եւ անցեալ տարի երկու երկրաշարժներ ունեցաւ: Մենք շատ ուրախ ենք որ կարողացանք այս Հիմալայի սարերի վրայի փոքրիկ երկրի լեզուն աւելացնել մեր պատգամների ցանկին: Համարեա բոլոր պատգամներս գրավոր թարգմանվում է բոլոր 34 լեզուներին: Բոլոր պատգամները հեռուստատեսական որակով տեսագրվում է եւ YouTube-ի միջոցով երեք լեզուների ցրվում է, Մանդարին Չիներեն, Սպաներեն եւ Անգլերեն լեզուներով:

Չեմ սիրում ընդունել, բայց ծերանում եմ: Անցեալին պէս բէյբալ չեմ կարողանում խաղալ, որը շատ չէի խաղում, ուրեմն շատ բան չեմ կորցրել! Այս է որ բոլորից շատ եմ կարոտել!!! Ես եւ կինս եւ եկեղեցու բոլոր նրանք որ Գոհաբանութեան ընթրիքի համար տեղ չունէին գնալու, միշտ շատ լաւ ժամանակ ենք ունենում այս առիթներում:

Մեր հոյսն է որ Քրիստոս ձեր տնում եւ ձեր կեանքում հայտնի լինի այս Ծննդեան գեղեցիկ եղանակում: Աստուած բոլորիս օրհնի!

Ձերն Հիսուսի անունով՝



Գ. Լ. Հայմերզ  
D.Min., Th.D., Litt.D.  
Փիլիպեցիս 4:13



Դկ. Հայմերզը եւ Իլիանան իրենց թոռնիկ Հանայի հետ երբ չորս ժամական էր:

**ԲՈՒՈՐ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ ԺԱՄԱՆԱԿ ԱՌ  
ԺԱՄԱՆԱԿ ՄՆՈՒՄ ԵՆ ՄԻ ՊԱՏԳԱՄԻ ՎՐԱ:  
ԿԱՐԴԱՑԵՔ ԻՄ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԵՒ ՏԵՍԵՔ ԹԷ  
ՁԵԶ ՕԳՏԱԿԱՐ Կ'ԼԻՆԻ: ՆՊԱՏԱԿԸ ԴՐԱՆՑ ԴԱ Է:  
ՄՈՏ 120,000 ՔԱՐՈԶԻՉՆԵՐ 216 ԵՐԿՐՆՈՐՈՒՄ  
ԿԱՐԴՈՒՄ ԵՆ ԻՄ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԵՒ ՕԳՏՎՈՒՄ  
ԵՆ ՆՐԱՆՅԻՑ: ԱՅՑԵԼԵՔ  
WWW.SERMONSFORTHEWORLD.COM**



Դկ. Հայմերզր, Ջան Սամուել Քէյգրնի (ձախ) եւ Նոահ Սանգ (աջ): Երկուսն նվիրվել են ծառայութեան եւ աստուածաբանութիւն են սովորելու:



Դկ. Հայմերզր Ջան Քէյգրնի հետ երբ նա մկրտում էր Պրն. Վիրգէլ Նիքլին



Աղեւա Մանհիվար մկրտվում է 87 հասակում



Դկ. Հայմերզր երբ մկրտում էր Պրն. Վիրգէլ Նիքլին:



Դկ. եւ Տիկ. Հայմերզի 34-րդ ամուսնութեան Տարեդարձում:



Բաժաւէլ Քիւէլար (ձ), Լեսլի Հայմերզ, Ջին Հայմերզ, Դկ. Հայմերզ, Տիկ. Հայմերզ մանուկ Հանայի հետ Տեր եւ Տիկ. Ջանի Քիւ:

**ԱՅՅԵԼ ԵՔ ՄԵՐ WEBSITE AT WWW.BAPTISTTABERNACLE.COM.**

**ՄԵՐ ՊԱՏԳԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՅԱՆՑԸ ՀԱՐԻՒՐԱՎՈՐ ԳՐԱՎՈՐ ԲԱՌ-ԱՌ-ԲԱՌ  
ԵՌԵՍՈՒՆ ՉՈՐՍ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՔԱՐՈՋՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ WWW.SERMONSFORTHEWORLD.COM**





Տեր եւ Տիկ. Ջէյմզ Բուփ: Նա եկեղեցու դաշնակախարն է:



Դկ. Հայմերզը Տիկ. Բոզ Շընալթ-Քուինի հետ:



Պատվելի Սարք Բաքլին Դկ. եւ Տիկ Հայմերզի հետ Նոր Տարի գիշերւան:



Դկ. Չանը իր որդի Թիմոթի Սանգի եւ Լարա Էսթրբարի ամուսնութիւնն է կատարում:



Դկ. եւ Տիկ. Հայմերզը եւ իր մայրը Լինդան Լեալին եւ Վեալին եւ Ջին Հայմերզը:



(Չախից) Դկ. Հայմերզը մանուկ Հանաի հետ, Տիկ Հայմերզը, Լեալին եւ Ջին Հայմերզը:

**ԱՅՅԵԼԵՔ ՄԵՐ WEBSITE AT WWW.BAPTISTTABERNACLE.COM.**

**ՄԵՐ ՊԱՏԳԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՅԱՆՑԸ ՀԱՐԻԻՐԱՎՈՐ ԳՐԱՎՈՐ ԲԱՌ-ԱՌ-ԲԱՌ ԵՌԵՍՈՒՆ ՉՈՐՍ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՔԱՐՈՉՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ WWW.SERMONSFORTHEWORLD.COM**